



ՎԱՆԱՁՈՐԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

10 հոկտեմբերի 2016 թ.

ՎԱՆԱՁՈՐԻ ԱՎԱԳԱՆՈՒ 1-ԻՆ ՆԻՍՏԻ

2016 թվականի հոկտեմբերի 10-ին, ժամը 11:00-ին, Վանաձորի ավագանու նստավայրում՝ Վանաձորի համայնքապետարանի շենքում (Տ.Մեծի 22 հասցեում), տեղի ունեցավ Վանաձորի նորընտիր ավագանու առաջին նիստը, որին մասնակցում էր Վանաձորի ավագանու 33 անդամ, համաձայն գրանցման արդյունքների այդ մասին հայտարարեց Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ.Սիմոնյանը:

Նիստին ներկա էին ԱԺ պատգամավորներ, հանրության և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի 1-ին մասի՝ նիստը վարում էր նիստին ներկա տարիքով ավագ անդամ Գայանե Քալանթարյանը, որը Ժ-11:05-ին հայտարարեց «Վանաձորի ավագանու առաջին նիստը բացված» և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 09-ի թիվ 1 արձանագրությունը՝ հայտարարեց, որ Վանաձորի ավագանու անդամներ են ընտրվել՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակից՝ Վանաձորի ավագանու 3 անդամ, «Լուսավոր Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակից՝ Վանաձորի ավագանու 10 անդամ, «Հայաստանի Հանրապետական» կուսակցության ընտրական ցուցակից՝ Վանաձորի ավագանու 13 անդամ, «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ընտրական ցուցակից՝ Վանաձորի ավագանու 2 անդամ, «Հայկական Վերածնունդ» կուսակցության ընտրական ցուցակից՝ Վանաձորի ավագանու 5 անդամ:

Հայաստանի Հանրապետության թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 09-ի թիվ 1 արձանագրությունը համաձայն Գ.Քալանթարյանը ներկայացրեց ավագանու անդամներին՝ կարդալով յուրաքանչյուրի անունը, ազգանունը, կուսակցության անվանումը.

«Հայաստանի Հանրապետական» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Ասլանյան Մամիկոն Լևուշի
2. Քալանթարյան Գայանե Սեյրանի
3. Գրիգորյան Արտյոմ Գագիկի
4. Պառավյան Կարեն Վաղդեմարի
5. Օհանյան Արթուր Ժորժի
6. Մատինյան Արմեն Ալբերտի
7. Մովսիսյան Հայկազ Վաղարշակի
8. Հովհաննիսյան Մարինե Ռոբերտի

9. Ափինյան Արման Վաղարշակի
10. Դավիթավյան Վահագն Ֆահրադի
11. Միմոնյան Դավիթ Միշայի
12. Մելքոնյան Սոխակ Սամվելի
13. Ղամբարյան Մեյրան Հայկի

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Մարուքյան Քրիստ Հրաչիկի
2. Սիմիկյան Հայկազ Ալեքսանի
3. Այվազյան Հրանտ Գնունու
4. Ղուկասյան Կարինե Նորիկի
5. Եղիազարյան Արմեն Էդիկի
6. Կոռյան Վահե Լևոնի
7. Մարգարյան Ռոմիկ Ֆրունզիկի
8. Կարապետյան Անահիտ Գագիկի
9. Բեկչյան Կարեն Սենիկի
10. Քոչարյան Միհրան Հրաչիկի

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Փելեշյան Արկադի Լյովայի
2. Դավթյան Կարեն Լևոնի
3. Սովսիսյան Էրիկ Արթուրի
4. Խլոպուզյան Հասմիկ Մարտինի
5. Նազարյան Տիգրան Գագիկի

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Օհանյան Այծեմնիկ Հայկի
2. Մարգարյան Հրանտ Կարլենի
3. Հակոբյան Դավիթ Վոլոդյայի

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Աղաբեկյան Մեյրան Սանասարի
2. Կյուրեղյան Արմենուհի Ստեփանի

Նիստը վարող Գ.Քալանթարյանը ներկայացրեց Վանաձորի ավագանու ս/թ հոկտեմբերի 10-ի նիստի օրակարգը, որը ընդգրկում է հետևյալ հարցերը.

1. Համայնքի ղեկավարի ընտրությունները կազմակերպելու համար ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:

2. Համայնքի ղեկավարի ընտրություն:

1. ԼՍԵՑԻՆ - Համայնքի ղեկավարի ընտրությունները կազմակերպելու համար ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորման մասին:

Նիստը վարող Գ.Քալանթարյանը հայտնեց, որ համայնքի ղեկավարի ընտրությունները կազմակերպելու համար Վանաձորի ավագանու ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովը ձևավորելու նպատակով խմբակցությունները ներկայացրել են առաջարկություններ՝ հաշվիչ

հանձնաժողովի կազմում ավագանու հետևյալ անդամների թեկնածություններն առաջադրելու համար.

- «Հայաստանի Հանրապետական» կուսակցություն՝ Վահագն Դավիթավյան (բանավոր),
- «Լուսավոր Հայաստան» կուսակցություն՝ Հայկազ Միմիկյան (բանավոր),
- «Հայկական Վերածնունդ» կուսակցություն՝ Կարեն Դավթյան (գրավոր),
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ Հրանտ Մարգարյան (բանավոր),
- «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն՝ Սեյրան Աղաբեկյան (բանավոր)

Հրապարակվեց - համայնքի ղեկավարի ընտրությունները կազմակերպելու համար ավագանու ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը.

- Վահագն Դավիթավյան - «Հայաստանի Հանրապետական» կուսակցություն,
- Հայկազ Միմիկյան - «Լուսավոր Հայաստան» կուսակցություն,
- Կարեն Դավթյան - «Հայկական Վերածնունդ» կուսակցություն,
- Հրանտ Մարգարյան - «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն,
- Սեյրան Աղաբեկյան - «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն

Նիստը վարող Գ.Քալանթարյանը հարցրեց, թե որ կուսակցություններն են առաջադրում համայնքի ղեկավարի թեկնածու: «Հայաստանի Հանրապետական» կուսակցությունն առաջադրեց Մամիկոն Ասլանյանի, «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը՝ Քրիստ Մարուքյանի թեկնածությունները, մյուս կուսակցությունները հայտարարեցին, որ համայնքի ղեկավարի թեկնածու չեն առաջադրում: Այնուհետև համայնքի ղեկավարի թեկնածուները հանդես եկան ելույթներով: Հարցեր և այլ ելույթներ չեղան:

Նիստը վարող Գ.Քալանթարյանը տեղեկացրեց, որ հաշվիչ հանձնաժողովի նախագահը կներկայացնի քվեաթերթիկի ձևանմուշը, կտեղեկացնի քվեարկության կարգը, այնուհետև դահլիճում կանցկացվի փակ գաղտնի քվեարկություն:

Հանձնաժողովի նախագահ Հայկազ Միմիկյանը ներկայացրեց հաշվիչ հանձնաժողովի ժամը 12:00-ի դրությամբ կայացրած որոշումները և արձանագրությունները ու դրանք փոխանցեց նիստը վարողին և առաջարկեց հայտարարել ընդմիջում մինչև ժ 13:00:

Հաշվիչ հանձնաժողովը ժամը 13:45-ին ազդարարեց քվեարկության սկիզբը: Քվեարկության ընթացքում «Լուսավոր Հայաստան» կուսակցության անդամ Միհրան Քոչարյանը առանց քվեաթերթիկը ծալելու դուրս եկավ քվեախցից և բոլորի ներկայությամբ սկսեց ծալել քվեաթերթիկը որի պատճառով քվեարկությունը ընդատվեց մոտ 1 ժամ, որովհետև նիստին ներկա անձանց միչև(այդ թվում ՀՀ ԱԺ պատգամավորներ Է.Մարուքյանի և Հ. Բիշարյանի ակտիվ մասնակցությամբ) ծավալվեց վեճ: Հաշվիչ հանձնաժողովը կազմեց արձանագրություն և տվյալ քվեաթերթիկը մարվեց: Այնուհետև քվեարկությունը շարունակվեց, քվեարկողին տրվեց նոր քվեաթերթիկ: Քվեարկությունը վերսկսվեց և ընթացավ առանց խոչընդոտների: Քվեարկությունը ավարտվեց ժամը 15:20-ին:

Հաշվիչ հանձնաժողովը մարեց չօգտագործված քվեաթերթիկները, հաշվեց երկու թեկնածուների օգտին կողմ քվեարկած քվեաթերթիկները՝ Մամիկոն Ասլանյան 19 ձայն, Քրիստ Մարուքյան 14 ձայն, քվեաթերթիկները տեղավորեց ծրարներում և հանձնաժողովի հինգ անդամներ ստորագրեցին ծրարները: Կազմվեց ամփոփիչ արձանագրություն: Ավագանու անդամները հրավիրվեցին դահլիճ: Այնուհետև հանձնաժողովի կողմից կայացրած բոլոր որոշումներն ու արձանագրությունները, ինչպես նաև ծրարները հանձնաժողովի նախագահը հանձնեց նիստը վարողին: Նիստը վարողը հայտարարեց «Վանաձոր համայնքի ղեկավար է ընտրվել Մամիկոն Լևուշի Ասլանյանը» և հրավիրեց նրան զբաղեցնելու նիստը վարողի տեղը: Վանաձոր համայնքի նորընտիր ղեկավար Մամիկոն Ասլանյանը շնորհակալություն հայտնեց բոլորին:

Նիստն ավարտվեց: